

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԱՍՈՐԻՆԵՐԸ

Պարսկաստանի ասորիները գաղթել են իրանց հայրենիքից — Ասորեստանից — Պարսկաստան IV և V դարերում: Այդ ժամանակներում կրօնական երկպառակութիւնը և վէճերը մի կողմից, օտար ազգերի հալածանքները միւս կողմից առաջացրել էին Ասորեստանում մի խառնաշփոթ և անորոշ դրութիւն:

Կրօնական վէճը Քրիստոսի մարդեղութեան և աստուածութեան մասին էր, և այդ վէճի վերաբերմամբ ասորական ամբողջ ժողովուրդը բաժանուած էր երկու կուսակցութեան: Մի մասը պնդում և հաստատում էր, թէ Քրիստոսը չարչարուել է և՛ որպէս Աստուած, և՛ որպէս մարդ-արարած, և դրանք իրանց գլխաւորի անունով կոչւում էին Նազուրէիներ: Իսկ միւս մասը ընդունում էր, որ Քրիստոսը որպէս Աստուած չէ չարչարուել, այլ որպէս սոսկ մարդ, և դրանք էլ իրանց առաջնորդի անունով կոչւում էին Նփրեմեաններ, կամ ինչպէս սովորաբար անուանում ենք՝ նեստորականներ:

Թէոդորոս կայսեր յարուցած հալածանքներից ասորիների մեծագոյն մասը թողնում է իր երկիրը և շարժւում այս ու այն կողմ, մի մասը, գլխաւորապէս Նփրեմեանները, գնում են դէպի հիւսիս և հաստատւում են մեծ մասով Ջուլամերկ գաւառը, բարձրանում լեռները և բռնում անառիկ վայրերը, իսկ միւս մասը Պարսից ծոցի ափերով գնում և հաստատւում է Հնդկաստանում: Սրանք Նազուրէիներն են:

Ժամանակի ընթացքում Ջուլամերկ գաւառից, Բաղդատից և Մօսուլից ասորիների մի մասը անցնում է Պարսկաստանի սահմանը և բռնում է Ուրմիոյ լճի արևմտեան ափերը:

Պարսկաստան մտած ասորիները երկար ժամանակ մի որոշ տեղ չեն հաստատուում, նրանք միշտ խումբ-խումբ շարժւում

են մի գաւառից միւսը, Տաճկաստանից Պարսկաստան, Պարսկաստանից Տաճկաստան, երկար նրանք թափառական և աստանդական կեանք են վարում: Պարսկաստանի ասորիները ժամանակի ընթացքում կամաց-կամաց շարժւում են դէպի Ուրմի լճի հիւսիս-արեւմտեան և հարաւ-արեւմտեան ափերը, ընդհանրապէս ցած հարթութիւնը, դաշտային տեղերը, իսկ մի փոքրիկ մասը դիմում է արեւմուտք, բարձրանում լեռները, բռնում Քիւրդստանը, գլխաւորապէս Մարգավար և Թարգավար գաւառակները:

Այժմ ասորիներ կան Ուրմի *), Սալմաստ գաւառներում, Սուլդուզ, Սօուզ-Բուլազ, Խօյ և Մարգավար ու Թարգավար գաւառներում:

Թէ որքան է եղել սկզբում Պարսկաստան գաղթած ասորիների թիւը յայտնի չէ, ճշգրիտ տեղեկութիւններ չը կան, այժմ նրանց թիւը հաշւում են 30—35000: Բայց անշուշտ պէտք է ընդունել, որ այս թւից առաջներում շատ է եղել, որովհետեւ դարերի ընթացքում շատերը կուլ են գնացել, ձուլւել են տեղական տարրի հետ, ինչպէս նկատելի է նոյն այդ երեոյթը և՛ այժմ: Բացի այդ, բաւական թւով գաղթել և բնակութիւն են հաստատել Կոյկլասի զանազան կողմերում, օր. Երեւանի և Էջմիածնի շրջակայ գիւղերում:

Այժմ ասորի ժողովուրդը բաժանուած է Ատրպատականում մօտաւորապէս այսպէս.—

Ուրմի գաւառ	5—6000 տ., տունը հաշ. 5 անդ. 25—30000
Քիւրդստան	2—300 » » » » 1—1500
Սալմաստ	6—800 » » » » 3—4000
Սուլդուզ, Սօուզ-Բուլազ	80—120 » » » » 4—600
Խօյ, Սինա և այլն	50—60 » » » » 2—300

Ուրիշ կերպ էլ չէ կարող լինել, քանի որ չը կայ ստատիստիկա: Մանաւանդ անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ այն հանգամանքը, որ ասորիները ցրուած են մի շարք գիւղերում, խառնուել են բնիկ ժողովրդի հետ, օրինակել նրանց նիստ ու կացը, փոխուել նոյն իսկ արտաքինով, հատ-հատ ընկել այս և այն խուլ անկիւնները. այդպիսի պարագաների մէջ անհնարին է վիճակադրութիւն կազմել, թէկուզ պոտենս անձամբ, այցելիս իւրաքանչիւր գիւղը:

* * *

Ինչպէս տեսանք բնակութեան դիրքը ասորիներին բա-

*) Ես օգտուել եմ զանազան զբաւոր աղբիւրներից գտնուած գործին մօտիկ մարդկանցից:

ժանել է երկու մասի—դաշտային և լեռնային ժողովուրդ։ Առաջինները կազմում են մեծագույն մասը, իսկ երկրորդները նուազ մասը։

Դաշտեցիները բնաւորութեամբ առհասարակ փչացած են։ Նրանք առանձին մշտական զբաղմունք չունեն։ մասնաւոր կերպով պարապում են մի քանի արհեստներով, ինչպէս հիւանութիւն, գերձակութիւն, որմնագլխներ են և այլն։

Դարաւոր ստրկութիւնը, նրանց աստանդական կեանքը, տեղական գիւղատէրերի կեղեքումները և բնիկ ժողովրդի բարբարոսութիւնները ստեղծել են մի ժողովուրդ, որ սոսկալի պատկեր է ներկայացնում։ Իսկ եթէ այդ բոլորի վրայ աւելացնենք և միսիօնարների վատ ազդեցութիւնը, պատկերը կատարեալ կը լինի։ Նա, դաշտեցի ասորին, միանգամայն ընկած է. նրա համար սրբութիւն, բարոյականութիւն, ընտանեկան մաքրութիւն զոյութիւն չ'ունի։ Նա, ընտելանալով քիչ շատ լաւ ապրուստի և այդ չը կարողանալով ձեռք բերել, զիմում է ամենաստոր միջոցների, խաչագողութեամբ է զբաղում։ Նրանք պանդխտում են Ռուսաստանի հեռու կողմերը, նոյնպէս և Կովկաս, մի գումար ձեռք բերելով՝ նորից վերադառնում են Պարսկաստան՝ բեռնաւորութեամբ հազարաւոր վարակիչ հիւանդութիւններով և աւելի ալանդակում առանց այդ էլ փչացած ասորիներին։

Ասորի տղամարդը մեծ մասով կեանքը անց է կացնում պանդխտութեան մէջ. հէնց այս հանգամանքին զլիաւորապէս պէտք վերագրել և անշուշտ զբանով պէտք է բացատրել այն երևոյթը, որ ասորի կանանց մէջ անբարոյականութիւնը տարածուած է սարսափելի չափերով։ Տարի չէ անցնում, որ 20—60 ասորի կին չ'ամուսնանայ թուրքերի հետ։

Չ'ունենալով ոչ մի ինքնուրոյնութիւն՝ դաշտեցի ասորիները կորչում են, կուլ են գնում տեղական ազգաբնակչութեան մէջ և բաժան-բաժան լինում այս և այն դաւանութեան։ Ծիշտ է, ասորիները ունեցել են առաջներում եկեղեցիներ, դեռ միսիօնարների մուտքից առաջ, եղել են թւով շատ ասորի եպիսկոպոսներ և քահանաներ, բայց միանգամայն անմխիթար վիճակի մէջ են եղել. եկեղեցիները զուրկ լինելով արդիւնքից, հոգեւոր պետերը աննախանձելի դրութեան մէջ լինելով, հնարաւորութիւն չեն ունեցել բաւարարութիւն տալ ժողովրդի հոգեւոր պէտքերին և մտաւոր պահանջներին։ Տգիտութիւնը սարսափելի աստիճանով էր տիրում։ Կարդալ-գրել իմացողին կարելի էր մատով ցոյց տալ. չը կային զպրոցներ, ուրիշ կրթական և հասարակական հիմնարկութիւններ։

Նրանց տնտեսական կեանքը միանգամայն քայքայուած էր.

չը կար նրանց ոտի տակ հաստատ հող, չունէին մշտական զբաղմունք, չը կար մշտական արդիւնքի աղբիւր իր պէտքերը հոգալու համար, իսկ պարտաւոր էր վճարել գիւղատէրերի պահանջած առաւարկական աստիճանի հասած հարկը և միևնոյն ժամանակ բաւարարութիւն տալ գիւղական զանազան տղրուկներին, լըցնել նրանց որկորը:

Այդպէս էր դաշտեցի ասորիները վիճակը և՛ շատ հեռու, և՛ շատ մօտիկ անցեալում, այժմ էլ գրեթէ նոյնն է, դեռ աւելի վատթար:

Դաշտեցիները միանգամայն հակապատկերն են ներկայացնում լեռնային բարձրութիւնները թառած մի բուռն ասորիները: Ծիլղ է, այնտեղ էլ տգիտութիւնը հաւասար աստիճանով տիրում է, բայց նրանք իրանց բարոյականով շատ բարձր մակերևոյթի վրայ են կանգնած: Լեռնցիները թէև թուով շատ քիչ են, բայց պահպանել են իրանց ազգութիւնը և անհամեմատ ինքնուրոյն են, չեն ենթարկւում և ձուլւում ընդհանրի հետ: Սրանք զբաւած իննելով անառիկ տեղերը, ապրում են մի տեսակ անջատուած դաշտային ժողովրդից, զերծ են մնացել այն բոլոր ախտերից, որոնցով ներխուել, փչացել են դաշտեցիները: Լեռնցիները չնորհիւ իրանց ղերքի և քաջութեան՝ զբաւել են պարսից կառավարութեան ուշադրութիւնը, և կառավարութիւնը սրանցից հեծեալզօրքի յատուկ դունդ ունի կազմակերպած Բէջան զօրապետի ղեկավարութեամբ: Այդ գունդը ունի յատուկ իր դրօշակը:

Ընդհանրապէս լեռնցի ասորիները ամբողջ չըջակացրում քաջ և կտրիչ կռուողների, ինքնապաշտպանների համբաւ են վայելում. քիւրդերը և թուրքերը չեն համարձակւում սրանց մի չոփին անգամ դիմել. առիթներ են եղել շատ անգամ, որ կառավարութիւնը սրանց միջոցով պաշտպանուել է Տաճկաստանի քիւրդերի դէմ:

Լեռնցի Ասորիները որոշ անկախութիւն են վայելում, միայն վճարում են յայտնի չափով տուրք: Շատ քիչ է պատահում, որ սրանք ցած իջնեն իրանց զբաւած տեղերից, լեռնային բարձրութիւններից: Սրանք թէև ցրուած են մի քանի գաւառներում իրանցից մի քանի անգամ աւելի քիւրդերի մէջ, բայց էլի իրանց անկախութիւնը չեն դիջում, և քիչ չէ այնպիսի գէպքերի թիւը, որ ասորիների մի փոքրիկ խումբը հալածել, յաղթել է իրանցից եռապատիկ, քառապատիկ աւելի քիւրդերին:

Լեռնցի ասորիները չեն պանդխտում ուրիշ երկիրներ, ոչ էլ Պարսկաստանի այս կամ այն կողմերը. սրանք երկրագործներ են, հողի հետ գործ ունեն, և ստանում են այնքան ար-

գիւնք, որ կարողանում են ապրել գոհ, բաւարարութիւն տալ իրանց պահանջներին: Ուրեմն սրանք անտեսապէս էլ բարուրդ վիճակի մէջ են, քան իրանց ազգակից դաշտեցիները:

* *

Զանազան դաւանութիւնների պատկանող միասիօնարները օգտուելով Պարսկաստանի անտեսական վատթար դրութիւնից բաւական հունձ են անում, մանաւանդ ասորիների մէջ:

Բողոքական միասիօնարները մտել են Պարսկաստան 1835 թւականին և պատկանում են ամերիկական պրեսբիտերական կամ երիցական եկեղեցուն: Այդ միասիօնարական ընկերութեան (Board) կենտրոնական վարչութիւնը ոչինչ չէ խնայում իր քարոզիչների գործունէութիւնը դիւրացնելու համար. նա ուղարկում է առատ միջոցներ, սկսում է օգնել ասորիներին, նրանց ընտանիքների դրութիւնը բարելաւել, ձրի աղքատանոցներ և հիւանդանոցներ բանալ, հիմնում է ասորին, ժողովրդական ուսումնարաններ, ուր ուսումը աւանդւում է ձրիաբար, նոյն իսկ բոլոր աշակերտները անշաւն բացառութեամբ՝ ստանում են դասական պիտոյքներ, որոշ չափով և՛ հաղուստներ: Այդ բոլորին աւելացրէք և՛ այն հանգամանքը, որ բողոքական ասորիները աւելի ապահով, աւելի ազատ են լինում պարսիկ հարստահարիչներից և կառավարութեան ազդեցութիւնից, նրանց կեանքը աւելի ապահով է լինում, քան բողոքականութիւն չ'ընդունող ասորիներինը:

Բողոքականները հաստատուել և գործում էին դաշտեցի ասորիների մէջ. լեռնցիները մնացել էին, ինչպէս և այժմ, անմատչելի: Այժմ բողոքական միասիօնարները գործում են ոչ միայն Ուրմիում, այլ և նրա շրջակայ գաւառներում, ինչպէս Սուլդուզ, Սօուշ-Բուլագ, Սալմաստ: Այդ բոլոր տեղերում ունեն մօտ 40—50 ասորին դպրոցներ, ուր սովորում են 1200—2000 աշակերտներ և աշակերտուհիներ: Իսկ Ուրմի քաղաքից քիչ հեռու, Շէհիր-չայի վրայ մի ընդարձակ գետնում կառուցել են իրանց կօլլէջը, հիւանդանոցը և ուրիշ հաստատութիւններ: Այդ կօլլէջը առաջ եղել է միջնակարգ դպրոց և կենտրոնականի դեր է կատարել շրջակայ գիւղերի համար, ունեցել է 6—7 դասարան, աստուածաբանական, բժշկական, արհեստագիտական առաջին բաժիններ, ուր պատրաստւում էին չրջիկ քարոզիչներ և ֆէլդշերներ, բայց այժմ այդ կօլլէջը վերածուել է հասարակ վարժարանի:

Պէտք է ասել, որ ժամանակին այդ կօլլէջը մեծ դեր է խաղացել, տուել է բաւական թւով ասորի կրթուած երիտասարդներ, մօտակայ գիւղերի և գաւառների համար ուսուցիչներ, պատրաստել է հմուտ արհեստաւորներ, գլխաւորապէս դերձակ-

ներ և հիւսններ: Առհասարակ բողոքականները ասորիներ լինելը կրթական գործին մեծ զարկ են տուել անցեալում, և այժմ ահագին թուով կրթուած ասորիներ կան:

Բողոքական միասիօնարներն ունեն իրանց մամուլը: Գրեթէ կէս դար է, ինչ հրատարակուում է «Ջահրեր դը-բարա» թերթը: «Ջահրեր դը-բարա» (Լուսոյ ճասագայթներ) կրօնական, բժշկական և պատմական թերթ է և հրատարակուում է ասորերէն: Այս թերթի խմբագիրը մի բողոքական միասիօնար է. թերթը արպաղըւում է միասիօնարների սեփական տպարանում:

Բողոքականներից յետոյ գալիս են կաթոլիկ միասիօնարները նոյնպէս ասորիների մէջ քարոզելու: Ասորիներից շատերը յանկարծ տեսնելով, որ կաթոլիկները (ֆրանսիացի) աւելի առատ են պարգևատրում, աւելի լաւ են խնամում, թողնում են բողոքականութիւնը և ընդունում են կաթոլիկութիւն:

Ընչ է, կաթոլիկ միասիօնարները բողոքականներից ուշ են սկսել իրանց պրօպագանդան ասորիների մէջ, բայց նախ քան բողոքական քարոզիչների մուտքը Ուրմի, այնտեղ եղել են Մօսուլից եկած կաթոլիկ ասորի քարոզիչներ *), բայց դրանք ոչ մի աջողութիւն չեն ունեցել: Այն էլ պէտք է ասել, որ կաթոլիկները դեռ դարեր առաջ մտել են Պարսկաստան և սկսել իրանց պրօպագանդան, նրանք դեռ Շահ-Աբբասի ժամանակներից եղել են Հին-Նախիջևանում, Նոր-Ջուղայում և Պարսկաստանի ուրիշ մասերում: Պարսկաստանը թէև վաղուց է ծանօթ ֆրանսիացի կաթոլիկներին, բայց Ուրմիում սկսել են իրանց գործը, ինչպէս ասացի, ուշ:

Կաթոլիկ միասիօնարները այժմ Ուրմիի զանազան մասերում ունեն դպրոցներ, բայց սրանց գործունէութիւնը Ուրմիում աւելի նեղ և սահմանակ է, աւելի քիչ աջողութիւն ունի, քան բողոքականներինը: Կաթոլիկների գործունէութիւնը կենտրոնացած է աւելի մօտիկ գաւառներում, մանաւանդ Սալմաստում, Խոսրովա գիւղում, ուր բոլոր ասորիները կաթոլիկներ են, ունեն չքեղ և գեղեցիկ շէնքեր, եկեղեցիներ, ունեն և դպրոցներ, ժողովարաններ:

Կաթոլիկները Ուրմիում ունեն տպարան, և ահա մօտ 10 տարի է հրատարակում են «Կալա-դը-շրարա» (Ճշմարտութեան ձայն) թերթը, որ խմբագրում է մի կաթոլիկ եպիսկոպոս:

«Կալա-դը-շրարան» աւելի ազատամիտ է «Ջահրեր-դը-բարայի» հետ համեմատած: Այս թերթը որոշ չափով ուշադրու-

*) Տաճկաստանի կողմերի ասորիների մէջ կաթոլիկները աւելի շուտ են սկսել իրանց կրօնական պրօպագանդան:

թիւն է դարձնում լեզուի մշակման վրայ, քարոզում է, որ պէտք է, նոյնիսկ անհրաժեշտ է, ասորի փոքր իշատէ՛ դարգացած դասի համակրութիւնը:

Միայն բողոքական և կաթոլիկ միասիօնարները չեն, որ դործում և քարոզում են ասորիների մէջ: Այստեղ, այս և այն ժամանակներում եկել և հաստատուել են նաև ուրիշ դաւանութեան ներկայացուցիչներ: Կան անգլիական-եպիսկոպոսական եկեղեցու ներկայացուցիչներ. այս անգլիական բողոքականները հին ծէսերը սիրողներ են և ձգտում են վերականգնել հին եկեղեցին, իսկ դրանց հակառակ ամերիկական բողոքականները հին ծէսերը միանգամայն մերժում են:

Եպիսկոպոսականները դործում են գլխաւորապէս Տաճկաստանի ասորիների, ջէլօնների մէջ և մասամբ Ուրմիում:

Կան նաև գերմանացի բողոքականներ: Սրանք ունեն միայն երկու որբանոց. մէկը Ուրմիում, երկրորդը Խոյում, որ առաջ Սալմաստումն էր:

Ռուսագաւան քարոզիչներն էլ գրաւեցին Ուրմիի ասորիներին 1899 թւականին. ռուս քարոզիչները հէնց առաջին օրից ունեցան արտակարգ աջոգութիւն:

Այդ արտակարգ և փայլուն աջոգութիւնը պէտք է անշուշտ բացատրել նրանով, որ ռուսական աղղեցութիւնը շատ տարածուած է Պարսկաստանում, մանաւանդ Ատրպատականում, իսկ ռուսահպատակի կեանքը և գոյքը միանգամայն ազահով է, նա ազատ է ամեն կեղեքումներից. ահա այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ ասորիների բազմաթիւ ընտանիքներ, բաւականին քահանաներ և եպիսկոպոսներ ընդունում են ռուսագաւանութիւն: Կաթոլիկ ասորիների գրեթէ կէսը և բողոքականների մօտ 20%՝ը դառնում են ռուսագաւան: Ասորիների հետ մտան ռուսաց եկեղեցու ծոցը և՛ բաւական թւով Ուրմիի հայերից:

Այդ կրօնափոխութիւնից շատ դժգոհ է Ուրմիի մահմեդական տարրը, գլխաւորապէս գիւղատէրերը, որովհետեւ վերջիններիս տնտեսական դրութիւնը որոշ չափով վտանգւում է զրանով: Ռուսագաւանութիւն ընդունող ասորիները ռուսաց տէրութիւնից պաշտպանութիւն գտնելով՝ սկսում են գիւղատէր թուրքերի վերաբերմամբ իրանց աւելի անկախ պահել, տուրք և բեգաւորի խոյս տալ: Ահա այդ տեղից գլխաւորապէս առաջանում է թուրք իշխող տարրի մէջ այն զօրեղ հակակրօնքը՝ զէպի ուսմանը, որ, բացի յայտնի ցոյցից ընդդէմ՝ ռուս քարոզիչներին, Թաւրիզի ռուսաց հիւպատոս Պետրովը 1899 թուի ամառը Ուրմի եղած ժամանակ չէ՛ կարողանում մի կտոր հող

ձեռք բերել ուսաց եկեղեցու շինութեան համար. ոչ մի թուրք չի համաձայնում ծախել իւր հողը, թէկուզ շատ թանկ գնով: Միայն Վեհափառ Շահը, երբ Եւրոպա կատարած իր առաջին ճանապարհորդութիւնից վերադառնալիս, Ռուսաց հիւպատոս Պետրովը դիմում է և խնդրում մի կտոր հող, լարգելով նրա խնդիրը, հրամայում է տալ, իսկ հողատիրոջը տալիս է մի ուրիշ կտոր հող:

Ռուս միսսիօնարները դեռ սեփական հաստատութիւններ չ'ունեն:

Ասորիների մէջ, ինչպէս տեսնում էք, գործում են մի քանի դաւանութիւնների ներկայացուցիչներ, և ասորիների մեծագոյն մասը բաժանուած է այդ դաւանութիւնների մէջ: Չը մոռանանք ասել, որ բոլոր քարոզիչներն էլ գործում են դաշտաբլնակ ասորիների մէջ. և սրանք բաժանուած են այսպէս.

Ռուսագաւան ասորիներ	մօտ 15—16,000	հոգի
Բողոքական	» »	7—8,000 »
Կաթոլիկ	» »	5—6,000 »
Եպիսկոպոսական	» »	500 »

Կան զանազան կողմերում դաշտեցի ասորիներ, շատ ան-նըչան թւով, մօտ 200—250 հոգի, որոնք դեռ հաւատարիմ են մնացել իրանց հին ասորական եկեղեցուն:

Միանգամայն մաքուր, հաւատարիմ են մնացել իրանց ասորական եկեղեցուն և կրօնապետ Մար-Շիմօնին՝ լեռնաբնակ մի բուռն ասորիները: Նրանք ազատ թառած լեռներին ապրում են գոհ իրանց վիճակից, դեռ ազգայնական դադաւիարը և ոգին վառ, անչէջ պահած, լեռնցուն վայել վարք ու բարքով, մաք-րութեամբ:

Ե. ՖԲԱՆԳԵԱՆ